Ես տոեցի նրան իմ դանակը: Նա աշխատում էր բաժանել երկու միմեանց կպցրած թերթեր: «Այդպէս կարելի է փչացնել, պէտք է մի հեղանիւթով լուծել սոսինձը», խօսում էր ինքն իրան: Դանակը մի կողմ դրեց, վեր կացաւ իր խուրջինի մէջ մի բան որոնելու:

Թէ ի՞նչ ժամանակ վերադարձել էր Ասլանը կաթողիկոսի մօտից, կամ մինչեւ գիշերոայ ո՞ր ժամը Ջալլադը զբաղոած էր իր մագաղաթներով, ես տեսնել չկարողացայ, որովհետեւ անգործութիւնից քունս տարաւ եւ աչքերս բաց արի այն ժամանակ միայն, երբ առաւօտեան արեգակի ճառագայթները ներս էին շողացել մեր խուցի նեղ լուսամուտներից: Անապատում լինել եւ այնպէս հանգիստ քնել, դա աներեւակայելի բան է: Գիշերը որքա՜ն տանջեցին մեզ Կտուց անապատում: Բայց այստեղ ոչ ոք չբախեց մեր դուռը, ոչ ոք չարթնացրեց մեզ, ժամ հրաւիրելով, թէեւ այստեղ եւս միաբանները սովորութիւն ունէին գիշերային ժամերգութիւններ կատարելու:

Ասլանը սովորականից աւելի ուրախ էր. ուրախ էր եւ Ջալլադը: Նրանք շտապեցրին ինձ շուտով հաւաքել մեր իրեղէնները, որ ճանապարհ ընկնէինք: Կղզու ափում սպասում էր մեզ վանքի նաւակը: Մենք նախ գնացինք կաթողիկոսի մօտ, նրա աջը համբուրեցինք եւ առինք նրա օրհնութիւնը: Բարի ծերունին արտասուքը աչքերում ճանապարհ դրեց մեզ, որպէս մի գթառատ հայր, որ ուղարկում է իր որդիներին դէպի հեռու աշխարհներ, մարգարիտներ որոնելու: Մի քանի աբեղաներ բերեցին մեզ մինչեւ կղզու ափը: Մեծ շնորհակալութեամբ բաժանոեցանք մենք այդ առաքինի կրօնաւորներից, որոնք այնքան անմոռանալի յիշատակներ թողեցին իմ մէջ... Մօտաւորապէս մէկ ժամից յետոյ նաւակը մեզ հանեց ցամաքը: Այստեղ, «դրսի տան» մէջ, պահոած էին մեր ձիաները: Նստեցինք եւ շարունակեցինք մեր ճանապարհը...

ԻԷ. ՎԱՆՔԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Երեկոյեան մենք անցնում էինք Կապուտ-կող կոչոած լեռան կապտագոյն ձորերի միջով: Այդ լեռան պատմական անունը, մեր հին գրիչներից հետզհետէ աղաւաղելով, կոչոեցաւ Ընձաքիարս, որ Ընձակայ-քար բառի փոփոխութիւնն է: Մինչեւ այսօր այդ լեռան կողքին կպած է Ընձակ անունով գիւղը, որ հայկազանց նահապետներից մէկի, Ընձակի անունն է կրում: Նոյն նահապետի անունով եւ լեռը կոչոեցաւ Ընձակայ-քար: Քար բառը մեր հին լեզուում երբեմն սար կամ լեռ բառերի տեղ էր գործածւում: